«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՌԵԿՏՈՐ Մ.Գ.Թ., ՊՐՈՖԵՍՈՐ՝ Դ.Ս. ԽԻԹԱՐՅԱՆ

«18» «հոկտեմբերի» 2022թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Գագիկ Կառլենի Էմինյանի «Հասարակագիտական առարկաները՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք» թեմայով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Անձի համակողմանի դաստիարակության խնդիրների շարքում առանձնահատուկ է հայրենասիրական դաստիարակության տեղն ու նշանակությունը: Այն կարևորվում է ներկայիս պատմական ժամանակահատվածում, երբ համաշխարհայնացման, մեր տարածաշրջանի ռազմական կոնֆլիկտների պայմաններում առաջ է գալիս ազգային ինքնագիտակցության, ազգային պատկանելիության և ազգապաշտպան խնդիրները:

Հայրենասիրական դաստիարակության իրականացումը կարևորվում է հանրակրթության համակարգում և հատկապես ավագ դպրոցականների շրջանում, քանզի 16-18 տարեկան պատանիները և աղջիկները գիտակցության զարգացման այն կարևոր փուլում են, երբ հայրենաճանաչողության և հայրենասիրության զգացումի ձևավորման գործընթացը ավելի ակտիվ, ավելի գիտակցված ու ավելի խորը բնույթ է կրում:

Անկասկած դպրոցը այս հարցում կարևոր և որոշիչ դերակատարություն ունի՝ հատկապես հաշվի առնելով հասարակագիտական բնույթի առարկաների հայրենասիրական դաստիարակության պոտենցիալ հնարավորությունները:

Այս ամենը մատնանշում է Գագիկ Էմինյանի ատենախոսական աշխատանքի խիստ կարևորությունը և արդիականությունը:

Հայցորդի հետազոտության ընթացքը և արդյունքների ներկայացումը իրականացվել է տրամաբանորեն հերթագայող փուլերով: Դրա վառ ապացույցն է ատենախոսության բովանդակության գլուխների և ենթագլուխների անվանումների, բովանդակության հերթականորեն գրագետ շարունակությունը:

Այսպես՝ սկսելով «Հայրենասիրական դաստիարակության գիտատեսական հիմքերը» գլխից հայցորդը աշխատանքի հաջորդ գլխում անդրադառնում է

հասարակագիտական այն առարկաների ներկայացմանը, որոնք դպրոցականների ուսումնական գործունեության բացի բուն առարկայական նպատակների և խնդիրների լուծմանը ունեն նաև կարևոր նշանակություն սովորողների հայրենասիրական դաստիարակության գործում: Ավարտվում է ատենախոսությունը հիմնահարցի վերաբերյալ մի խումբ ռեսպոնդենտների շրջանում սոցիոլոգիական հարցման և հայրենասիրական դաստիարակությանը ուղղված հեղինակի կողմից մշակված դասընթացի արդյունավետության ուսումնասիրությամբ:

Անդրադառնալով իրականացված հետազոտությանը անհրաժեշտ է նշել, որ հայցորդը նախ և առաջ ներկայացրել է «Հայրենասիրություն» եզրույթի էությունը՝ առաջարկելով ինչպես հայրենական, այնպես էլ օտարալեզու գրականությունում առաջարկվող բացատրությունները: Կարևոր է, որ այս հարցում հեղինակը մեծ ուշադրության է արժանացրել հայտնի հայ մանկավարժների և գիտնականների կարծիքները:

Ընդհանրացնելով ուսումասիրված կարծիքները Գ. Էմինյանը ներկայացնում է հայրենասիրության ձևավորման տեսական և կիրառական դրսևորումների հնարավոր մակարդակներ:

Հեղինակը ավագ դպրոցականների դաստիարակության այս կողմի կազմակերպման համար առանձնանում է մի քանի նպատակ՝ սկսած սովորողներին հայրենի բնությանը հաղորդակից դարձնելու, մշակութային և կրոնական առանձնահատկությունների իմացությունից, մինչև բարոյական արժեքների և վարքագծի ներդաշնակության ապահովումը: Այսինքն այս հարցում հայցորդը արդարացիորեն նկատում է, որ հայրենասիրական դաստիարակության հարցում կարևորվում է ինչպես դպրոցականների գիտելիքների անհրաժեշտ շրջանակի, այնպես էլ նրանց գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Հայցորդը որպես հայրենասիրական դաստիարակության արդյունավետությանը խոչընդոտող գործոն նշում է դպրոցական հասարակագիտական առարկաների տեսական և գործնական դասերի անհամաչափ հարաբերակցությունը՝ 10/1-ի: Եվ նման խնդրի լուծումը Գ. Էմինյանը կապում է նաև ներդասարանային և ներդպրոցական միջոցառումների անցկացման հետ:

Որպեսզի ավելի արդյունավետ իրականացվի դպրոցականների հայրենասիրական դաստիարակությունը հայցորդը մշակել և աշխատանքում ներկայացրել է ժամանակակից հայրենաերի մոդել՝ որտեղ միավորված են տեսական և գործնական կողմերի բաղադրիչները:

Հետագա աշխատանքների կազմակերպման համար հեղինակը ուսումասիրում է հասարակագիտական առարկաների հնարավորությունները՝ ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գործում՝ առանձնացնելով այդ առումով դասերի որոշ ձևերը:

Ընդորում Գ. Էմինյանը նշում է տեսական այն կարևոր գիտելիքների ուղղությունները, որոնք կարող են արդյունավետ դարձնել հասարակագիտական

առարկաների ներգործությունը ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության այս բաղադրիչի վրա:

Առանձնացնելով հասարակագիտական առարկաների հայրենասիրական դաստիարակության հնարավորությունները հայցորդը շեշտադրում է այդ գործընթացի արդյունավետ կազմակերպման կարևորությունը՝ նկատի ունենալով համապատասխան մեթոդների, միջոցների և գործընթացի կազմակերպման ձևերի ընտրության հարցը: Այդ առումով Գ. Էմինյանը ներկայացնում է մանկավարժությունում հայտնի դաստիարակության մեթոդների բազմազանությունը:

Հեղինակը կարևորում է նաև հասարակագիտական առարկաների միջև կապերի ձևավորումը՝ որպես դաստիարակության այդ կողմի արդյունավետության ապահովման կարևոր պայման: Այդ առումով աշխատանքում նշվում է միջառարկայական կապերի ձևավորման կարևոր պայմանները, որոնցից են՝ ընդհանուր նպատակ, առարկաների չափորոշիչային պահանջներ, դաստիարակչական բաղադրիչ և այլն:

Հայցորդը այդ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկում է արտադասարանային միջոցառումների ցանկ՝ միավորված «Հայրենագիտական դասընթաց»-ում: Դասընթացի բովանդակային և կազմակերպական կողմերը պլանավորելու համար հեղինակը իրականացրել է Վանաձոր քաղաքի և Տավուշի մարզի հիմնական և ավագ դպրոցների 4-9 և 10-12 դասարանների 200 աշակերտի և 70 ուսուցչի շրջանում սոցիոլոգիական հարցում: Հիմնվելով հարցման արդյունքներին հայցորդը մշակեց հայրենասերի իդեալական պատկերը՝ կատարելատիպը և հիմնվելով հայրենասիրական դատիարակության գործընթացում բացահայտված խնդիրներին՝ պատրաստեց «Հայրենագիտական դասընթաց»-ը: Հետագայում դասընթացի արդյունավետությունը ուսումնասիրվեց մեկ ուսումնական տարում իրականացված գիտափորձի ընթացքում:

Գիտափորձի հիմնական նպատակն էր տարբեր թեմաների, մոտեցումների, գործնական արտադասարանային և արտադպրոցական միջոցառումների շնորհիվ բարձրացնել աշակերտների վարքագծում հայրենասիրական դրսևորումները՝ խորացնելով դրանց իմաստային կողմը:

Դասընթացի նկարագրից ելնելով կարելի է նշել, որ հեղինակը նախատեսել է դասընթաց 10 ժամ ծավալով, որը ընդգրկում էր ինչպես դասարանային աշխատանք այնպես էլ էքսկուրսիա և տնային աշխատանքներ, որը իրականացվելու էր 10-12 դասարանների աշակերտների շրջանում:

Հավելենք, որ հայցորդը փորձարարական ծրագրով նախատեսել էր հայրենասիրական դաստիարակությունը ուղղված ուսումասիրվող 10 թեմայի տրոհում՝ ներառելով թեմայի նպատակը, միջառարկայական կապերի ներկայացումը, տնային հանձնարարությունները և սպասվող վերջնարդյունքները:

Մշակված դասընթացի արդյունավետության մասին կարելի է դատել ինչպես ուսուցիչների և աշակերտների հարցման արդյունքների փոփոխության հիման վրա,

այնպես էլ ուսուցիչների կողմից աշակերտների հայրենասիրական ուղղվածության վարքը մշակված սանդղակով գնահատելու միջոցով:

Մշակված դասընթացի մեկամյա ներդրումը աշակերտների արտադասարանային ուսումնական գործընթացում բացահայտեց ծրագրի դրական ներգործությունը ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության արդյունավետության վրա: Դրա մասին են վկայում 2017-2018 ուս տարվա ավարտին անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները: Վերջիններս ավելի բարձր էին փորձարարական դասարաններում, քան այն աշակերտների շրջանում, որոնց կրթական գործընթացը իրականացվել էր ըստ դպրոցի ուսումնական պլանի:

Այսպիսով կարելի է նշել, որ իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքում հիմնավորվեց մշակված դասընթացի և առաջարկված մոտեցման արդյունավետությունը ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գործընթացում:

Ատենախոսությունը շարադրված է պարզ լեզվով, գրագետ և բաժինների տրամաբանական շարունակությամբ: Կարևորվում է նաև Գ. Էմինյանի կողմից առաջարկվող դասընթացի նյութի մանրակրկիտ ու ամբողջական մշակումը ու ներկայացումը ինչպես ատենախոսության հիմնական մասում, այնպես էլ «Հավելված» բաժնում:

Աշխատանքը արժանի է բարձր գնահատականի, քանզի արդիական է , լուծվել են առաջադրված նպատակը և խնդիրները:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել որոշ նկատառումներ, որոնք բացատրման և պարզաբանման անհրաժեշտություն ունեն.

1. Ատենախոսության 2-րդ գլխի և 2.1 ենթագլխի անվանումներում առկա է «հայրենասիրության ձևավորում» բառակապակցությունը, մինչդեռ ավելի ճիշտ կլիներ օգտագործել «հայրենասիրության դաստիարակություն» բառակապակցությունը:

   Իսկ 2.2 ենթագլխի «... ուսուցման ... կազմակերպումը՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիրակության միջոց» անվանման մեջ, կարծում ենք նպատակահարմար է օգտագործել ոչ թե միջոց այլ «պայման» բառը: Վերջինս ավելի ճիշտ կարտահայտեր հայրենասիրական դաստիարակության կազմակերպման էությունն ու բովանդակությունը: Թեզի 3.2 ենթագլխի անվանման մեջ ճիշտ կլիներ ձևակերպել «հայրենագիտական դասընթացի փորձաքննությունը և արդյունքները» այլ ոչ թե ... փորձաքննությունը և ներդրումը, քանի որ դասընթացի փորձաքննությունը ինքնին արդեն իսկ ներդրում է ենթադրում աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացում:
2. Չնայած հայցորդը իրականացրել է մշակված դասընթացի փորձաքննություն, սակայն հետազոտության խնդիրների շարքում անհասկանալի կերպով նման խնդիր չի առաջադրվել:

3. Հեղինակը ատենախոսության 41-րդ էջում նշում է. որ ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակությունը կապված նպատակների, բովանդակության և իրականացման պայմանների հետ «Բնականաբար, այն չի կարող լինել նույնպիսին թե քաղաքային և թե գյուղական դպրոցներում», սակայն չի հիմնավորում և պարզաբանում այդ կարևոր փաստը:
4. Յուրաքանչյուր գծապատկեր և տրամագիր պետք է ունենան իրենց անվանումները, որոնք բացակայում են 1-ին և 2-րդ գծապատկերներում:
5. Ատենախոսության 153-րդ էջում ներկայացված է հետազոտության արդյունքների հիման վրա մշակված համակարգ (գծապատկեր 2), որը սակայն ոչ թե «Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության մեթոդական համակարգ» է, այլ իրականացման, կազմակերպման համակարգ, քանզի օրինակ «ուսուցման և դաստիարակության բովանդակություն»-ը ավելի շուտ վերաբերում է ոչ թե մեթոդական, այլ հիմնականում գործընթացի կազմակերպման բովանդակությանը: Կամ «գործընթացի նկատմամբ միասնական պահանջներ» բաղադրիչը, չի կարելի վերագրել դաստիարակության գործընթացի մեթոդական կողմին՝ այն առավելապես վերաբերվում է այդ գործընթացի կազմակերպման կամ իրականացման պայմաններին:
6. Ատենախոսության բովանդակության 3.2 ենթագլխում նպատակահարմար էր ներկայացնել ուսուցիչների կողմից 10-12-րդ դասարանների աշակերտների հայրենասիրական դաստիարակվածության գնահատականը, որը իրականացվել է հեղինակի կողմից հատուկ մշակված սանդղակի միջոցով:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ներկայացված նկատառումները չեն նսեմացնում Գ. Էմինյանի կատարված մեծածավալ հետազոտության արժեքը և արդիականությունը:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն ինքնուրույն կատարված, ավարտուն աշխատանք է, եզրակացությունները բխում են հետազոտական աշխատանքի արդյունքներից:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում էհիմնական դրույթները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Կառլենի Էմինյանի «Հասարակագիտական առարկաները՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմք» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, տարբերվում է իր նորույթով, տեսական, գործնական և սոցիալական նշանակությամբ: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական

աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել է պրոֆեսոր Ա.Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի 2022թ հոկտեմբերի 10-ի նիստում (արձանագրություն թիվ 4), որին մասնակցել են ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ.Ա. Բաբայանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ա. Չատինյանը, հ.գ.թ. դոցենտ Ա.Գ. Ստեփանյանը, հ.գ.թ., դոցենտ Վ.Ղ. Գեղամյանը, հ.գ.թ., դոցենտ Ն.Է.Գևորգյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Ս.Դավթյանը, մ.գ.թ., դոցենտ Թ. Յու. Ազատյանը, դոցենտ Թ.Շ. Սոֆյանը, ասիստենտներ Ս.Ս. Արզաքանյանը, Ա.Մ. Գաբրիելյանը, գործավար՝ Մ.Գ. Ավետիսյանը:

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պրոֆեսոր Ա.Ա. Լալայանի անվ. Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., պրոֆեսոր **Հ.Ա. ԲԱԲԱՅԱՆ**

Հաստատում եմ՝ Հ.Ա. Բաբայանի ստորագրությունը

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գիտական քարտուղար՝ մ.գ.դ., պրոֆեսոր **Ա.Ա. ՉԱՏԻՆՅԱՆ**